**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

# ՀՐԱՄԱՆ

**ք.Երևան** 06 » հունիսի 2017թ. № 512-Ա

«ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՄԻ ՇԱՐՔ ԵԱՏՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 34-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015 թվականի հունվարի 27-ի ««Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» N 34-Ա հրամանը և հրամանով հաստատված Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայականը (N-01, նույնականացնող համար՝ Ն-01(H-01)2014):

2. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին:

3. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել 3 տարի ժամկետով՝ մինչև 2020

թվականի հունիսի 6-ը, տրամադրել Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ N-01 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-01(H-01)2017:

4. «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիան գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ